ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2016թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԷԴՈՒԱՐԴ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀԽՍՀ վաստակավոր մարզիչ, ֆիզկուլտուրայի և սպորտի ականավոր գործիչ Էդուարդ Թումանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոց հ.25 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԷԴՈՒԱՐԴ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԽՍՀ վաստակավոր մարզիչ, ֆիզկուլտուրայի և սպորտի ականավոր գործիչ, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի նախկին պրոռեկտոր Էդուարդ Թումանյանը ծնվել է 1929թ. ։

1953-1982թթ. աշխատել է ԵՊԼՀ-ում՝ որպես ամբիոնի ավագ դասախոս, ամբիոնի վարիչ, պարտկոմիտեի քարտուղար և պրոռեկտոր: Աշխատանքային տարիների ընթացքում ստեղծվել են բոլոր պայմանները նրա՝ որպես սպորտի կազմակերպիչ, գիտական աշխատող, շինարար, հետագայում նաև քաղաքական և հասարակական գործիչ, լրագրող կայացման համար:

Էդուարդ Թումանյանը մեծ ներդրում է ունեցել Վ. Բրյուսովի անվան համալսարանի կառուցման գործում: Նրա մասնակցությամբ և ղեկավարությամբ կառուցվել է համալսարանի նոր մասնաշենքը (այժմ՝ Ռուս-հայկական (սլավոնական) համալսարան):

Էդուարդ Թումանյանի գործունեությունը համալսարանում չի սահմանափակվել միայն դասախոսական գործունեությամբ: Իր նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ 1954թ. ստեղծվել է հանրապետությունում առաջին ուսանողական ինքնագործ սիմֆոնիկ-էստրադային նվագախումբը, որը հետագայում ստացավ համաժողովրդական ճանաչում, ինչպես նաև ճանաչելի դարձավ ԽՍՀՄ հանրապետությունների այլ քաղաքներում: Այդ ժամանակահատվածում առավել վառ կերպով բացահայտվեց Էդուարդ Թումանյանի երգահանական տաղանդը: Իր գրչին են պատկանում այնպիսի երգեր, ինչպիսիք են՝ «Այլ աչեր», «Շշնջա», «Նաիրա», «Երիտասարդական-լիրիկական» և շատ այլ ստեղծագործություններ, որոնք հանրապետությունում հայտնի են որպես ժողովրդական երգեր:

Էդուարդ Թումանյանի ղեկավարության տարիներին Վ. Բրյուսովի անվան համալսարանի կանանց ձեռքի գնդակի թիմը բազմակի անգամ դարձել է հանրապետության չեմպիոն:

Էդուարդ Թումանյանն իր աշխատանքային գործունեության տարբեր ժամանակահատվածներում աշխատել է հանրապետական սպորտկոմիտեի վարչության ղեկավարի, ՀԽՍՀ լուսավորության մինիստրության վարչության պետի, ԽՍՀՄ սպորտկոմիտեի Ծաղկաձորի գլխավոր սպորտբազայի փոխտնօրենի պաշտոններում:

1969թ. նա արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր մարզչի կոչմանը:

1972թ. Էդուարդ Թումանյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում:

Բազմակի ընտրվել է Կոմկուսի շրջանային կոմիտեների անդամ, Երևան քաղաքի շրջանային խորհուրդների պատգամավոր:

Էդուարդ Թումանյանը մահացել է 2005թ. Երևանում:

ՀԽՍՀ վաստակավոր մարզիչ Էդուարդ Թումանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոց հ.25 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի շրջանավարտների միավորման նախագահ Պարգև արքեպսիկոպոս Մարտիրոսյանի և Գեղագիտության ազգային կենտրոնի գլխավոր տնօրեն Լ. Իգիթյանի կողմից։

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԷԴՈՒԱՐԴ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Էդուարդ Թումանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԷԴՈՒԱՐԴ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Էդուարդ Թումանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ